ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈՒԲԵԼԵԱՆ

—o—

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

—

(Սեփական հեռագիր)

Էջմիածին, 12 հոկտեմբերի

Երկրագնդի բոլոր հայաբնակ վայրերից թէ եկել և թէ նշանակված են մօտ 70 պատգամաւոր։

Ամեն օր ստացվում են շնորհաւորական հեռագիրներ զանազան տեղերից։

Ուրբաթ, երեկոյեան ժամը 5-ին, տեղի ունեցաւ Կաթողիկոսի հանդիսաւոր երթը տաճար։ Վեհափառին ուղեկցում էին արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, միաբանութիւնը և պատգամաւորները։ Կաթողիկոսի ամսոնվանին բռնած ունէին՝ Թիֆլիսի վաճառականապետ Ա. Միլեան, Թաւրիզի վաճառականապետ Զ. Նազարբէկեան, «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեան և Մօսկվայի պատգամաւոր Կուսիկեան։

Երեկոյեան ամբողջ բակը լուսավառված էր և նուագում էր երաժշտութիւնը։ Էլեքտրական լուսաւորութեամբ շքեղ կերպով լուսազարդված էին ս. Մեսրոպի և ս. Սահակի պատկերները։

Երեկոյեան ժամը 7-ին Հ. Առաքելեանի նախաձեռնութեամբ կայացաւ պատգամաւորների ընդհանուր ժողով մատենադարանի մեծ դահլիճում։

Հ. Առաքելեան բանալով ժողովը՝ առաջարկեց վերջինիս քննութեան առնել մի խումբ պատգամաւորների հետևեալ առաջարկութիւնները. 1) Կաթողիկոսին շնորհակալական ուղերձ ներկայացնել Համազգային Յուբելեանը կազմակերպելուն համար։ 2) Հայկական հարցի առիթով ուղարկել Պարիզ Պօղոս Նուբար-փաշային շնորհակալական ուղերձ։ 3) Քննութեան առնել զպրոցական ֆոնդի կազմակերպման հարցը։ 4) Պատգամաւոր Թ. Խզմալեանի առաջարկը՝ ի մօտոյ ծանօթանալ Մատթէոս եպիսկոպոսի Թիֆլիսում արած վերջին հաղորդագրութեանը վերաբերեալ զօրամնեների հետ։

Ընդհանուր ժողովը միաձայն ընդունեց այդ 4 առաջարկը, և Հայկ Տէր-Միքայէլեանի նախագահութեամբ քննութեան ենթարկելով նրանց, ընտրեց մի յանձնաժողով՝ խմբագրելու ուղերձները և պատրաստելու զեկուցումներ դպրոցական ֆոնդի և ուսուցչական խնդրի վերաբերեալ։

Յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Հ. Առաքելեան, Եւանգուլեան, բահաստեղծ Յ. Յովհաննիսեան, Խաչիկ Յարութիւնեան, Ա. Միլեան, Յ. Ամիրխանեան, Թ. Խզմալեան և Ա. Զամալեան։

Շաբաթ, առաւօտեան ժամը 8-ին, սկսվեց Կաթողիկոսի, բոլոր հոգևորականութեան և պատգամաւորների շքերթը դէպի Օշական գիւղը։ Կաթողիկոսի փակ կառքին հետևում էին մօտ 50 կառքեր։

Օշականում հաւաքվել էլ ժողովրդի հոծ բազմութիւն։ Պատարագիչն էր Այվազեան արքեպիսկոպոսը։ Պատարագից յետոյ Կաթողիկոսը՝ շրջապատված հոգևորականներով, պատգամաւորներով և բազմաթիւ ժողովրդով՝ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց հայ տաճարի գաւիթ ս. Մեսրոպի դերեզմանի վրա։ Հոգեհանգստից յետոյ եղաւ ժողովրդական նախաճաշ։ Ասվեցին ճառեր և տեղի ունեցան շնորհաւորութիւններ։

Շաբաթամէջ կը վերադառնայ Քասախ գետի ափով։

Օշական գիւղը այդ օրը մի հրաշագեղ պատկեր էր ներկայացնում իրանից։

Գլխաւոր տօնակատարութիւնը տեղի կունենայ վաղը Էջմիածնում։

ԷՋՄԻԱԾԻՆԸ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԱՅԻՆ

—

Վաղարշապատ, 9 հոկտ.

Մի երեք օր յետոյ կատարվելու են Էջմիածնում դրերի դիւաի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի հանդէսները։

Առ այժմ եկել են 5 պատգամաւոր. սպասվում է և յայտնի է յանձնաժողովին, որ գալու են նաև զանազան տեղերից մօտ 40 հոգի։ Վեհափառը կարգել և հաստատել